



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 09 » 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 74

Ձեռնարկողը՝

<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ

Ք. Երևան, Շիրակի փ. Արտադրամաս 74/16

Գործունեությունը՝

**Շահումյանի ավազի հանքավայրի հարակից փարածքներում
2018-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների
արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական
ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ **ԲՓ 74**

«**10**» **09** 2018թ.

Արարատի մարզի Շահումյանի ավազի հանքավայրի հարակից փարածքներում 2018-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	<<ՄԼ Մայնինգ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	<<Գ>>
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Շահումյան համայնք

Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրություն:

Երևակման օգտակար հանածոները ծագումնաբանորեն կապված են Արաքս գետի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ և հանդիսանում է գետաողողային տիպի ավազակուտակ:

Երևակման ավազներն ուսումնասիրվելու են «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-95 ՀՍ ԳՈՍ-ի տեխնիկական պահանջների համապատասխան՝ որպես լցանյութ ծանր բետոններում, ինչպես նաև ասֆալտաբետոնում, շինարարական շաղախներում և այլ տեսակի շինարարական աշխատանքներում դրանց պիտանելիությունը պարզելու նպատակով:

Շահումյանի ավազակոպճային խառնուրդի երևակումը գտնվում է Արարատի մարզի Շահումյան գյուղի 4.5կմ հարավ-հարավ-արևմուտք, Տափերական գյուղից 4կմ հարավ-արևմուտք, Փոքր Վեղի գյուղից 4կմ արևմուտք և Լուսառատ գյուղից 4.2կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք:



Տեղամասի հետախուզումը կիրականացվի 2 հետախուզաառուների և 11 հետախուզահորերի միջոցով՝ նմուշարկման զուգորդությամբ:

Տեղամասերի 1:5000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 64.1հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Նկատի ունենալով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընտրված տարածքի չափսերը, հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 5մ խորությամբ, 75.0գծ.մ կամ 180մ³ ընդհանուր ծավալով 15 հետախուզահորերի անցմամբ: Հորերի կտրվածքը ստորին մասում կկազմի մոտ 1x0.8մ, իսկ մակերեսում՝ 3x0.8մ: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել էքսկավատորով:

Համաձայն նախնական գնահատման հայտի հետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է օգտվել նաև տեղամասին հարակից Շահումյանի ավազի հանքավայրում 2004թ. անցած թիվ 7, 13 և 16 հետախուզական խրամների տվյալներից:

Հետախուզահորերի անցմանը զուգընթաց, նախատեսվում է կատարել փորձնական հանույթ: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է անցնել 2 փորձնական բացահանք յուրաքանչյուրը 100մ³ ծավալով, ընդհանուրը 200մ³: Օգտակար հանածոյի գրանուլոմետրական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներալոգիական ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հետախուզահորից վերցնել 1-ական ակոսային նմուշ՝ օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց: Օգտակար հանածոյի նմուշարկումը կկատարվի կուտակի լրիվ հզորությամբ վերցված 10x5սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են անցած բոլոր հետախուզահորերը և բացահանքերը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են՝ հետախուզահորերի փաստագրում 75գծ.մ, բացահանքի փաստագրում 60.0գծ.մ, ընդամենը՝ 135.0գծ.մ:

Նախատեսված են նաև ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական և ռադիոմետրական ուսումնասիրություններ:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզափորվածքի անցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է աշխատանքային հրապարակի և հետախուզահորերի տարածքի մակերեսից, երբ հողաբուսաշերտը վերականգնվում է 0.25մ խորության վրա:

Հետախուզահորերի ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 36մ², իսկ աշխատանքային հրապարակի մակերեսը 50մ²: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝ 4.3մ³: Հետախուզահորերի աշխատանքների ժամանակ ռեկուլտիվացիան իրականացվում է աշխատանքներին զուգահեռ:

Աշխատանքերը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի համար նախատեսվող գումարը հաշվարկված է 50000դրամ:

Ներկայացված նախնական գնահատման հայտով նոր ճանապարհների կառուցում և վերանորոգում չի նախատեսվում, քանի որ դեպի տեղամաս տանող ճանապարհները բարեկարգ են: Շահումյանի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: Երևակման տարածքից ամենամոտ



գտնվող հատուկ պահպանվող տարածքը դա «Խոր Վիրապ» պետական արգելավայրն է, որը գտնվում է 1.5կմ հեռավորության վրա:

Տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Տեղամասի հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները:

- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը բացահանքում, ավտոճանապարհների վրա:

- Ավագը տեղափոխող ավտոտրանսպորտը փակել հատուկ ծածկոցներով:

- Փոշեզրկման նպատակով արտադրական գոտիներում կատարել ջրցանում՝ տեխնիկական նպատակներով օգտագործվող ջուրը գնելով մոտակա բնակավայրից:

- Օգտագործվող ագրեգատները (բուլդոզեր, էքսկավատոր) աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել խախտված հողերի ռեկուլտիվացիա:

- Հետախուզական փորվածքների տարածքից հեռացված բուսահողը նախատեսվում է կուտակել հատուկ հատկացված վայրերում: Նախատեսվում է իրականացնել տվյալ տարածքի համար բնորոշ թիթեռնածաղկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանք և դրա միջոցով ճիմի առաջացում, ինչը պահեստավորման ընթացքում կբարձրացնի հողի հակաէրոզիոն հատկությունները:

-Նախատեսվում է աշխատանքների վտանգավոր տեղամասերը ցանկապատել՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Տեղամասի ուսումնասիրության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային օդ արտանետվող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:


- Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգ՝ կախյալ մասնիկներ, հոտ, գույն, կոշտություն, աշխատանքների ընթացքում շաբաթական մեկ անգամ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ վեց ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Եզրահանգումներ. Ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արարատի մարզի Շահումյան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական



ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ


1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումներին և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՄԼ Մայնինգ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Շահումյանի ավազի հանքավայրի հարակից տարածքներում 2018-2021թթ. ընթացքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Գլխ. մասնագետ՝



Ա. Դոնոյան

Ձ. Զուռնայան